

բաւուներն և իր ընտրելոց իրաւասութիւնն թէ պարտուց և թէ առաջ-
նորգի մը ընտրութեան խնդրոց մէջ:

Տեղւոյս և հեռաբնակ ազգայնոց կ'ընտրուի մեկնել այս հանելուկն
և արժանաւոր անուն մը տալ Պատրիարքարանի այս ընթացքին. ըստ
մեզ օրէնքի մը շնորհած իրաւուներն անդամատել. օրէնքը ղեղծել է, ան-
կից շեղիլ է:

Քայց ընդհանուր ազգին վերականգման մեծ գործին մէջ բարձր քա-
ղաքագիտութեանց վերէն սաւառնող քաղաքագէտ Պատրիարքարան
կրնայ եղեր այսչափ օրէնսագէտ չ'լինիլ: Իւր այս ծուռ քայլերը մասնա-
ւոր նպատակ մը չունին: Ինչ նոր փորձանք կ'պատրաստուի ազգին
գլխուն, ուշադրութեան առնուած է: Միթէ Պօլսոյ փաստաբան ազ-
գայինք անաչառապէս իմաստասիրած են Եգիպտոսի խնդիրը: Իւր ինչ-
պէս Պատրիարքարան պիտի ազատի այն պատասխանատուութենէ որ,
մէկ կողմանէ, հակառակ Սահմանադրական սկզբանց, Ն. Վ. Ստեփան
փաշան լիազօր գործիք կը կանգնէ, և միւս կողմանէ տեղւոյս ազգայ-
նոցս անբռնարարելի իրաւանց յանդուգն ձեռք կ'երկարէ՝ ազքատին,
գպրոցին և եկեղեցւոյն նուիրական լուծայն գողերու կոկորդը և իր
Փրոպականութայի աւազանը լեցնելով, որոյ վրայ հաշիւ և համար հարց-
նելու և առնելու բացարձակ իրաւուներն ազգայնոցս ազատ քուէար-
կութեամբ ընտրուած օրինաւոր վարչութեան մը կ'պատկանի:

* * *

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԵԴԱՐՁ ՃԵՄԱՐԱՆԻ.

Սեպտեմբերի 24 ին Ս. Գէորգայ տօնի օրը կատարուեց ձեմա-
րանի իններորդ տարեգարձը շքեղ հանդիսով: Հանդիսաւոր Ս.
պատարագից յետոյ Միաբանական Ուխտը ըստ իւրաքանչիւր
աստիճանի եկեղեցական զգեստներով, առաջ՝ ձեմարանի աշա-
կերտները առաջնորդութեամբ ուսուցչական խմբի, յետոյ եր-
գեցիկների խումբը յաջմէ եւ յահեկէ ունելով Սրբազան Եպիս-
կոպոսների եւ Վարդապետների կիսաշրջանը, խաչ—խաչվառնե-
րով եւ ամենայն սպասուք բոլորեցին հանգուցեալ Տէր Գէորգ
Գ. ի խաչանկար սեաւ թաւշեայ դիազարգով սքոյուած գերեզ-
մանը: Սկսուեց հոգեհանգստեան կարգ Վաղարշապատու եւ
այլ տեղերից՝ (մանաւանդ Շիրակից ուխտ եկած) երկսեռ խուռնե-
րազմութեան ներկայութեամբ: Քափօրի հանդիսագիրն էր Ամե-
նապատիւ Տեղակալ Տէր Մկրտիչ Սրբազան Արքեպիսկոպոսը՝ եւ
կարգավար՝ պատարագիչ Գեր. Տէր Յովհաննէս Սրբազան Եպիս-

կոպոս Տէր Յարութիւնեան: Հոգեհոնգստեան կարգը վերջանալուց յետոյ «Քաջամարտիկ» շարականի երգասացութեամբ թափօրը ուղղուեց դէպ ի ձեմարան նոյն հանդերձանքով: Հանդարտաքայլ գնացքը վանքի արտաքին պարսպի հիւսիսային դռնից դուրս գալով, եւ հասարակաց պարտիզի ու հիւսիսային պարսպի միջանցքով ուղի հատանելով, դադարեց ձեմարանի հիւսիսային սինազարդ գաւթի առաջ, ուր ըստ սովորութեան կատարուեց հոգեհոնգիստ ձեմարանի Հիմնադրի եւ Նորա ծնողաց համար:

Տարեդարձի հանդէսը բացուեց Արժ. Յուսիկ Վարդապետի ատենախօսութեամբ, որ ընաբան առնելով սերմանացանի առակը՝ յորդորում էր ամենքին նման լինել բարի եւ պարարտ երկրի՝ պողարերելու հարիւրաւոր վաթսնաւոր եւ երեսնաւոր: Այս ատենախօսութեան հետեւեց աշակերտների երգասացութիւնը. ապա ձեմարանի Տեսուչ Մեծ. Պ. Արշակ Նահապետեան ամբիոնից կարգաց տարեկան ուսումնական հաշիւ, որ ընթերցողները կը կարգան այս ամսատետրում: Հետեւեց երգ, եւ ապա Մեծ Պ. Վարապետ Վաստանեան բարձրացաւ ամբիոն եւ կարգաց մի ճառ, որի բովանդակութիւնը վերաբերում էր վանքերին եւ նոցա պիտանաւորութեանը ի հնումն, եւ այժմ՝ եւս Ս. Էջմիածնի ազգին արած ծառայութեանը: Պարօնը խօսելով ձեմարանի հիմնարկութեան մասին, աներեւակայելի իրողութիւն համարեց ձեմարանի այժմեան կազմակերպութիւնը թէ աշակերտների յաջող զարգացման եւ թէ նոցա քաջառողջութեան մասին. որով ապացուցվումէ ոմանց յուրեղանների աննպաստ կասկածների անտեղութիւնը «Յուսով ենք սպել այգ ճառն եւս: Այսպէս ժամը 1 1/2 վերջացաւ տարեդարձի արտաքին հանդէսը, այնուհետեւ աշակերտները իրանց ուսուցիչների հետ ձեմարանում, իսկ Միաբանական ուխտը աշխարհական անձանց հետ վանքի ամառնային սեզանատանը վայելեցին հանգիսաւոր ճաշ: Միաբանական սեզանատանը Արժ. Խորէն Վարդապետ Ստեփանէ բնաբան առնելով Ս. գրքից «Առ գետս Բարեբազուց» սրտաշարժ կտորը, ատենաբանեց հայրենասիրութեան վերայ:

Երեկոյեան՝ վանքում վառուած էին լապտերներ, իսկ ձեմարանում ճրագալոյց էր գունագեղ ջահերով եւ լապտերներով զարդարուած էր ձեմարանի հիւսիսային ճակատը, աշակերտներ:

ըր իրանց քաղցրանուագ երգասացութեամբ հրապուրում էին բազմութիւ ուխտաւորներին եւ Վաղարշապատի հասարակութեան: Այս հանդէսն եւս տեւեց մինչեւ երեկոյեան 9 ժամը: Իսկ ուխտաւորների ուրախ հասարակութիւնը տեղական նուագաձուլութեամբ շարունակեց իւր զուարճութիւնը մինչեւ առաւօտեան արեւագալը: Նոյն օրը Ս. Պատարագից յետոյ ուխտաւորները զուարճանում էին ականատես լինելով լարախողացներին եւ ականջալուր լինելով նուագաձուլութեանց:

Համառօտ նկարագրելով այդ հանդէսները, դոցա տղաւորութեան տակ մնում է ասել թէ ժողովուրդը եւ այն եւս ստորին դասակարգը որքան կենդանի հաւատ ունի դէպի իւր հայրենի սրբութիւնները, որչափ ուրախ է, երբ նա իւր անմեղ հայեացքը ձգում է այնպիսի բաների վերայ, որոնք իրան համար հրաշալիք են թիւում. եւ ինչ հոգեղմայլ տղաւորութեան տակ է մնում նա: Այժմեան ուխտագնացութիւնը միայն կատարվում է անգլիտակցաբար մանկական ջերմ հաւատով, երանի՛ այն ժամանակին, երբ այդ մանկական ջերմ հաւատի հետ կը միանայ եւ գլիտակցութիւնը, իսկ հնութիւնները կարծարծեն հայրենաստիքութիւն այդ ուխտաւորների մէջ, որոնք տարագրութեան մէջ Եւրեւպեացի ուսանող Եւրոպեացիների անձկով յիշէին իրանց հայրենիքն ու հայրենական սրբութիւնները՝ որոնք են եկեղեցին, լեզուն եւ կրօնը: Ահա Պ. Տեռչի ճառը:

ԱՐԵՆԱՊԱՏԻ ԲԱՐՁՐ ՄՐԵԱԶԸՆ ՀԱՅՐ,

ՄՐԲԱԳՈՒՄՄԵՐ ՀԱՐԷ

ԵՒ ՄԵՆԱՐՈՒ ՀԱՆԴԻՍԱԿԱՆՔ.

Այսօրուայ կատարած հոգեհանգստեան կարգը յիշեցրեց մեզ այն մեծ կորուստը, որ կրեց ձեմարանը անցեալ տարի Աեկտեմբերի 6-ին. Ազգիս Վեհափառ Վաթնուղիկօսը կնքեց իւր կեանքը՝ խոր արտմուլթեան մէջ ձգելով ամբողջ Ազգի հետ ի միասին եւ իւր ձեռակերտ ձեմարանը, որի համար յընթացս երկար տարիների ոչինչ ջանք եւ հոգացողութիւն խնայած էր եւ որ հասել էր արդէն այն դրութեան, երբ մի քանի ամից յետոյ առաջին անգամ պէտք է աւարտէին իւրեանց ուսման ընթացքը մի քա-

նի ուսանողներ, որոնցով սկիզբն էր դնուելու յաջորդ տարիների համար հետ զհետէ Ազգին պարգեւելու բարձր ուսումն ստացած մանկավարժական պատրաստութեամբ ուսուցիչներ եւ եկեղեցական պաշտօնեաներ: Այսօր, երբ ձեմարանը իւր կարճատեւ գոյութիւնից յետոյ կատարումէ իւր իննամեայ տարեգարձը եւ առաջին շրջանի ուսումնաւարանների մասին աւետում է հայ հասարակութեան, բացակայ է այն Անձը, որ երկար տարիներ սպասում էր այս օրուան: Այս, այս տխուր յիշողութիւնը մեր ամենիս ուրախութիւնը արտմութեան է փոխում:

Մանաւանդ զգալի էր Վեհափառ Գէորգ Գ. ի մահը այն կողմից, որ ձեմարանը նիւթապէս անապահով գրութեան մէջ մընալով, շատերի մէջ կասկած էր մնում — մի՞ գուցէ Վեհ. Հիմնադրի հետ ի միասին կնքէ իւր գոյութիւնը եւ այս մեծ հաստատութիւնը, Այս կասկածը բարբրաղգարար միանգամայն անհիմն եղաւ. այսօր Ս. Սինօզը իւր բոլոր ջանքը եւ հոգացողութիւնը գործ է դնում ձեմարանը իւր գրութեամբ պահպանելու, չնայելով վանքի ներկայ սուղ միջոցներին: Քանիցս անգամ Ամենապատիւ Արքեպիսկոպոս Տեղակալ Հայրը իւր եւ Արքեպիսկոպոսական Հարց եւ վանքի միաբանութեան կողմից յայտարարած է ձեմարանիս մէջ, թէ նոքա ուխտել են նոյնութեամբ պահպանել այս նուիրական տաճարի գրութիւնը: Եւ արդարեւ մինչեւ այսօր ամենայն սրբութեամբ կատարած ենք տեսնում այս ուխտը: Մենք պարտք ենք համարում հրապարակաւ յայտնել այս մասին, որպէս զի ամեն կասկած, եթէ կայ, փարատուի եւ ամենքը հաւատարմութեամբ վերաբերուին դէպի վանքի մտադրութիւնները ձեմարանի մասին:

Միայն նիւթական միջոցներով չէ որ կարելի է ապահոված համարել մի այսպիսի մեծ հիմնարկութեան ապագան: Ի՛նչ կարող է անել գրամը, երբ ջերմ համակրութիւն կամ հաստատուն կամք չկայ՝ գործը առաջ տանելու համար: Այդ ջերմ համակրութիւնը, այդ հաստատուն կամքը մենք ակներեւ տեսնում ենք եւ ամենայն իրաւամբ այդ առհասաւտչեայ ենք համարում, որ ձեմարանի յարատեւութիւնը վանքի կողմից միանգամայն ապահոված է: Մենք հարցի նիւթական կողմը երկրորդական ենք համարում, որովհետեւ շատ անգամ տեսել ենք որ, ազգը Ս. Աթոռոյս համար երբէք իւր լուծայն խնայած չէ երբ զգացել է, որ

այդ գումարը չի վատնվում: Գործի համար դրամ չինայոյ աղ-
գը՝ տեսնելով որ Ա. Էջմիածնի մէջ պահպանվում է մի ձեմարան,
ուր աւելի քան երեք հարիւր աշակերտ է ուսանում, որոնցից
երկու հարիւրը գիշերօթիկ են—ի հարկէ չի խնայելու եւ սորա
համար: Այս հանգամանքները ի նկատի առնելով ձեմարանի
գրութեան մասին միանգամայն ապահով կարող ենք լինիլ եւ
հանգիստ սրտով շարունակել մեր գործը:— Գառնանք 1882—3
ուս. տարուայ տեղեկագրին:

ՏԵՂԵԿԱԳԻՐ

1882—3 ուս. տարուայ

Յընթացս 1882—3 ուս. տարուայ Մանկ. ժողովը գումարե-
ցաւ 24 անգամ ձեմարանիս վերաբերեալ զանազան խնդիրների
վերաբերութեամբ: Սոցանից գլխաւորներն են.

Տարուայ սկզբում բացուեցաւ Երրորդ լսարանը, որով պէտք
է բոլորուէր ձեմարանի մասնագիտական ընթացքը: Ինչ-
պէս որ առաջին երկու լսարանները մանկավարժական ուղղու-
թեամբ էին կազմակերպուած, այնպէս էլ նոր բացուած Գ. լսա-
րանին նոյն ընթացքը նշանակուեցաւ մանկավարժական եւ փի-
լիսոփայական առարկաներով եւ գործնական պարապմունքնե-
րով: Այնպէս որ մի կողմից մանկավարժութեան եւ սորա օժան-
գակ փիլիսոփայական գիտութեանց տեսութիւնն էր աւանդ-
վում, միւս կողմից գործնական կրթութիւնն էր մատակարար-
վում մանկավարժական արուեստի մէջ ընտելանալու համար՝
փորձնական դասերի, խորհուրդների եւ ժողովների միջնորդու-
թեամբ, որոնց ղեկավարում էր պ. Սեդրակ Մանգինեանը: Ան-
ցեալ տարի մենք ուրախութեամբ յիշեցինք, թէ ինչ մեծ օժան-
գակութիւն պէտք է լինէր վարժոցի տեղափոխուելովը նախկին
ժառանգաւորաց Գարոցի մէջ: Գորանով ոչ միայն ամբողջապէս
ծխական գարոցի երեք բաժանմունքների դասատուութիւնը
յանձնուելու էր մեր լսարանցիներին իւրեանց վարժութեան հա-
մար, փոխանակ մի բաժանմունքի, ինչպէս որ առաջին տարին
էր քանի ձեմարանը իւր իւրական վարժոցը չունէր, այլ եւ ձե-
մարանի առաջին դասարանն էլ փոխադրվում էր այնտեղ այն
յուսով, որ եթէ փորձը յաջողէր, ապագայում ձեմարանի Բ.